# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 43-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ (ՆՇԱՆ, ԳԾԱՆՇՈՒՄ, ԼՈՒՍԱՑՈՒՅՑ)ԿԱՀԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 13.1 կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.06.2006թ. թիվ 1206-Ն որոշման 6-րդ կետը համայնքի ավագանի որոշում է.

1.Վարդենիս քաղաքի Երիտասարդության -Ռոման փողոցների, կինոյի հրապարակի, ժամացույցի գործարանի հրապարակի, Վ. Համբարձումյան-Լ.Ազգալդյան, Ռոման-Երիտասարդության, Հ.Անդրեասյան-Արզոյան փողոցների խաչմերուկների հետիոտների անցումների (զեբրա)գծանշման և Վ. Համբարձումյան, Լ.Ազգալդյան, Ռոման, Երիտասարդության, Հ.Անդրեասյան փողոցների երկայնական գծանշման համար հատկացնել 510000(հինգ հարյուր տասն հազար)ՀՀ դրամ:

2.Ժամացույցի, Խաղաղության հրապարակների հետիոտների անցումների մի մասի գծանշումը (զեբրա) և Հանրապետական նշանակության՝ Երևանյան, Չարենց, Վ. Սարգսյան, Լեռնագործների փողոցների երկայնական գծանշման իրականացումը թողնել պետական միջոցների հաշվին:

3.Համայնքի միջոցներով փաստացի կատարված աշխատանքների դիմաց վճարումը կատարել համաձայն ներկայացված ակտերի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՔԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ

5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ

8. ՃՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ

9. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՍՈՒՆ

Կ.Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՈԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ